ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 3 1956

Կ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԱՃԸ 1955 ԹՎԱԿԱՆԻՆ

1955 թ. հունվարի 1-ին Պետական Մատենադարանը ունեցել է 9532 հայերեն ձեռագիր։ 1956 թ. հունվարի 1-ին հայերեն ձեռագրերի հավաքածուն ամփոփում էր 9567 ձեռագիր։ Այսպիսով, մեկ տարվա ընթացքում Մատենադարանը հարստացել է 35 հայերեն կամ հայատառ նոր ձեռագրերով։ Այդ ձեռագրերը ձեռք են բերվել Սովետական Միության տարբեր վայրերում (Երևան, Լենինական, Ռոստով, Աստրախան, Թեոդոսիա և այլն) կամ ստացվել են արտասահմանից (Փարիզ, Մարսել, Բեյրութ)։ Ձեռագրերից երկուսը (№№ 9534 և 9564) լինելով 20-րդ դարի երկեր, չնայած ժամանակագրական դասակետից չեն համապատասխանում Մատենադարանի պրոֆիլին, այնուամենայնիվ արժեքավոր բովանդակություն ունենալով մուծվել են ձեռագրական հավաքածուի մեջ։

Ստորև տալիս ենք ձեռագրերի համառոտ նկարագրությունը, ըստ հերթական համարների[1]։

1. № 9534

«Յիշողութիւններ կամ Տոնմական վիճակագրական համառատ տեղեկութիւն տանն Մաթոսանց, որ այժմ կոչվում են Սիմէոնեանցներ, 1780 թուականից սկսեալ մինչև 1925 թ.։ Գրեց Կոմիտաս քահանայ տէր Ղուկասեան Սիմէոնեանց։ Քարվանսարա գիւղ, որ այժմ վերակոչի Իջևան։ 1925 թ. ապրիլի 14-ին»

Ձեռագիրը սովորական դրասենյակային մատյան է, թերթեր՝ 76, մեծություն՝ 34×22 սմ, գիր՝ շղագիր։ «Յիշողութիւններում» կան գյուղի առօրյային վերաբերվող տեղեկություններ, նկարագրվում է դպրոցի բացումը, թատրոնը և այլն։ Վերջին էջերը լրացվել են 1925—1939 թթ.։

2. № 9535

«Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի, [ի] խնդրոյ տեառն Գրիգորի հայոց կաթուղիկոսի»

Թերթեր՝ 196, մեծություն՝ 20×14,8 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ ստվարաթուղթ, ժամանակ՝ ԺԸ դար։

---

[1] *№ 9533-ը կազմված է ճաշոցի 49 հատուկենտ պատառիկներից, որոնք գրանցված էին պատառիկների հավաքածուի № 709-ի տակ։*

3. № 9536

Տաղարան

Էջեր՝ 34, մեծություն՝ 14×9 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ սովարաթուղթ, ժամանակ՝ ԺԹ դար։

4. № 9537

«Գիրք քարոզից, ժողովեցեալ ի գրոց աստուածայնոց և ի լուսաւոր բանից սուրբ վարդապետաց։ Աշխատութեամբ տեառն Սիմէօնի գիտնականն կարուղիկոսին և ծայրագոյն պատրիարքին ամենայն հայոց... Մեծատենչ ըղձիւ արտագրեցեալ և օրինակեցեալ կարի զգուշութեամբ ի Յակոբայ անպիտան իբրու վարդապետէ Սանահնեցւոյ»։

Թերթեր՝ 399՝ մեծություն՝ 18,5×14,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր ու շղագիր, կազմ՝ կաշեպատ գրոշմազարդ տախտակ, գրիչ՝ Հակոբ եպիսկոպոս, ժամանակ՝ 1756 թ., տեղ՝ Էջմիածին։ Ունի նորոգողի հիշատակարան —392ա։

5. № 9538

Աւետարան

Թերթեր՝ 305, մեծություն՝ 26×17,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորագիր, կազմ՝ կաշեպատ գրոշմազարդ տախտակ (առաջին կողի վրա մեծապյա խաչ՝ գունավոր քարերով), գրիչ՝ Աստուածատուր, ժամանակ ՉԻԸ—1479 թ., տեղ՝ «ի գաւառս ի յԵկեղեաց ի սուրբ մենաստանս, որ կոչի Տղա սուրբ Գրիգորն», հիշատակարաններ՝ 1479, 1571, 1697, 1911 թթ.։ Ունի ավետարանիչների նկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր։

6. № 9539

Ժողովածու բժշկական, ախթարական

Թերթեր՝ 141, մեծություն՝ 15,5×10,5, նյութ՝ թուղթ, գիր՝ շղագիր, կազմ՝ կաշեպատ տախտակ, ժամանակ՝ ՌՄԿԷ (1818 թ.)։

7. № 9540

Շարակնոց

Թերթեր՝ 391, մեծություն՝ 12,5×9 սմ, նյութ՝ մագաղաթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ սովարաթուղթ, ժամանակ ԺԵ—ԺԶ դար։ Ունի կիսախորաններ, լուսանցազարդեր, զարդագիր սկզբնատառեր։

8. № 9541

Ա. «Ներբաւածութիւն ի տրամաբանութիւն Արիստոտէլի և ըստ լատինացւոց սումուլէ։ Սումուլէ, այսինքն տրամաբանութիւն» *(էջ 1—38)։*

Բ. «Սկզբունք լոճիկայի» *(էջ 39—68)։*

Էջեր՝ 68, մեծություն՝ 21,2×15 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, նորակազմ, ժամանակ՝ ԺԸ դար։ Ժողովածուն թարգմանություն է լատիներենից, լուսանցքներում և բուն տեքստում հանդիպում են լատիներեն բառեր։

9. № 9542

«Գրիգորի եռամեծի քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի աշակերտութիւն Յոհաննու Որոտնեցւոյ արարեալ բան խրատական և ոգեշահս և հանճարս իմաստայեղս, ի մեկնութիւն և ի գովեստ փառաց տօնից աէրունականաց, ի պատիւ սրբոց և ի պատնաւ գիտութեան ախմարաց՝ նորին աշակերտաց» (պարունակում է 41 քարոզ)։

Թերթեր՝ 334, մեծութիւն՝ 21×14 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, նորակազմ, ժամանակ՝ ՌՃՀԳ—1724 թ., տեղ՝ Եւդառ գյուղ, գրիչ՝ Աստուածատուր։ Հիշատակարաններ՝ 1724 և 1825 թթ.։

10. № 9543

«Գիրք աղօթից Սիմէոնի Երևանցւոյ»

Թերթեր՝ 20, մեծութիւն՝ 31,5×20,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ ստվարաթուղթ, ընդօրինակված է Ս. Երևանցու ձեռագրի տպագրվելուց առաջ (հմմ. «Գիրք աղօթից կարգաւորեալ և շարադրեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ», Նախիջևան, 1794), ժամանակ՝ 1775 թ., տեղ՝ Էջմիածին, գրիչ՝ Մինաս եպիսկոպոս։ Հիշատակարաններ՝ 1775, 1776 1792 թթ.։ Ձեռագիրն ունի բազմաթիվ անճաշակ զարդեր։

11. № 9544

«Բանաստեղծութիւն չորս եաքերնուս վրա»։

Թերթեր՝ 99, մեծութիւն՝ 21×16,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, նորակազմ, գրիչ և ստացող՝ Սարգիս Յովհաննէսով Խարապայով, տեղ՝ Նոր Նախիջևան (՞), ժամանակ՝ 1839 թ., հունվար։ «Բանաստեղծութիւնը» չափածո մի երկ է վերջին դատաստանի մասին, արևմտահայերեն լեզվով։

12. № 9545

Ա. «Տեառն Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ, յորժամ չոգաւ դեսպանութեամբ ի թագաւորէն հայոց Լևոնէ ի Կոստանդնուպոլիս։ Հարցումն պատրիարգի և պատասխանի սրբոյն Ներսիսի» (1ա—4բ)։

Բ. «Թուղթ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ Կիլիկեցւոյ Տարսոնի։ Պատասխանի Յուսկանն արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք, յորում լուծանէ զհարցումն կղերիկոսացն Անտիոքա և վասն որ ի հայք աստուածային շնորհի ճշմարտութենէ ի վերայ բահանայական կարգի և ժողովրդականաց ուղիղ հաւատոյն որ ի Քրիստոս» (5ա—11բ)։

Թերթեր՝ 12, մեծութիւն՝ 23,5×17 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, նորակազմ, ժամանակ՝ ԺԷ—ԺԸ դար։

13. № 9546

Տաղարան։

Թերթեր՝ 19, մեծութիւն՝ 15,3×11 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, նորակազմ, ժամանակ՝ ԺԸ դար։ Տաղարանում կա 8 տաղ՝ հայերեն և հայատառ թյուրքերեն, նաև Երուսաղեմի սրբավայրերի՝ խորանների և եկեղեցիների ցանկ։

14. № 9547

Ժողովածու աղոթքների և ախթարքների

Թերթեր՝ 97, մեծություն՝ 10,2×7,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտագիր, նոբակազմ, ժամանակ՝ ԺԸ դար։

15. № 9548

Աւետարան

Թերթեր՝ 209, մեծություն՝ 28,3×20,2 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ ատվարաթուղթ, թիթեղյա զարդերով, ժամանակ՝ ՌՄԷ—1758 թ., գրիչ՝ Պողոս տիրացու։ Հիշատակարաններ՝ 1758 և 1894 թթ.։ Գրչի 1758 թ. հիշատակարանից՝ «Նա ևս աղիւ ժբտեալ հայցեմ սիրելի հարցդ և եղբարցդ մերոց թողութիւն շնորհէք խոշրութեան և սխա[լա]նացս իմոյ՝ վասն զի յոյժ վշտակրութեան և տառապանաց միջի կայաքոչ թէ մեք և երկիրս մեր միայն՝ այլ առ հասարակ ամենայն աշխարհ բովանդակ՝ զի կարի և յոյժ էր սով և սաստանութիւն, որ զչարեկ ցորենոյն առ և ծախն էր Կ.(60) զուռուշ, որ անունն կայր և ինքն ոչ կայր։ Զի բազում աղքատք և տնանկք լալով և ողբալով շրջէին ընդ փողոցս քաղաքիս և շուկայից [աղ]աղակելով անկեալ մեռանէին։ Նա ևս լուաք ոմանց, թէ քաղաքն անմիտ կին ոմն այլազգի զենեալ և կերեալ է որդին իւր վասն սովոյ, զոր տէր Աստուած փրկեալ ազատեսցէ, ամէն...» (209բ)։ Ունի ավետարանիչների մանրանկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր։

16. № 9549

«Բարոյական ատուածաբանութիւն»

Թերթեր՝ 329 (հին էջակալման առաջին 20 էջերը ընկել են), մեծություն՝ 19,7×16,5, նյութ՝ թուղթ, գիր՝ շղագիր, նոբակազմ, ժամանակ՝ ԺԹ դար։ Թարգմանական աշխատություն է՝ բաղկացած երկու հատորից։

17. № 9550

Մաշտոց

Թերթեր՝ 94 (սկզբից և վերջից թերի), մեծություն՝ 17,8×13,2 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ԺՁ դար։

18. № 9551

Գիրք աղմոսաց Դաւթի

Թերթեր՝ 166 (սկզբից և վերջից թերի), մեծություն՝ 9,5×6,5 սմ, նյութ՝ մագաղաթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ թավշապատ ատվարաթուղթ, ժամանակ՝ ԺԷ—ԺԸ դար։ Ունի լուսանցազարդեր, ժապավենաձև գլխազարդեր, սկզբնատառերը՝ զարդագիր։

19. № 9552

Աւետարան

Թերթեր՝ 276, մեծություն՝ 24,5×16,8 սմ, նյութ՝ թուղթ, բոլորգիր։

կազմ՝ թավշապատ սովարաթուղթ մետաղյա խաչերով, ժամանակ՝ 1413 թ.[1] գրիչ՝ Յովհաննէս (Կոլոտիկ), տեղ՝ Հերմոնի վանք։ Հիշատակարաններ՝ 1413 թ., ապա անթվակիր («...և ես Յովանէսս ԳՌ (3000) դահեկան տվի, զաւետարանս թափեցի ի գերութենէ» (275բ), և 1580, 1880 թթ.։ Ունի բազմաթիվ արժեքավոր մանրանկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր[2]։

20. № 9553

Հոգևոր երգերի և մեղեդիների ժողովածու

Թերթեր՝ 150 (սկզբից և վերջից թերի), մեծություն՝ 9,5×6,2 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր և նոտրգիր, նորակազմ, ժամանակ՝ ԺԷ դար։

21. № 9554

Մանրուսմունք

Թերթեր՝ 313, մեծություն՝ 11,5 × 8,3 սմ, նյութ՝ մագաղաթ և թուղթ (301—313 թերթերը), գիր՝ բոլորգիր, խազերով, կազմը՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ներքին կողմն ունի դաջած կտորներ, ժամանակ՝ ՉՉՉ (1337 թ.), գրիչ՝ Առաքել, տեղ՝ «յանուն կայս Կոստանդայ»։ Հիշատակարաններ՝ 1337 թ., անթվակիր, 1415 թ.։ Անթվակիր հիշատակարանն է. «Ընդ նմին (յիշեցէք) և զվերջին սատցաւղ զսուրբ տառս զՍտեփանոս կրաւնաւոր քահանայն, որ սատցաւ զսա յարդար վաստակոց իւրոց ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոյ, հաւրն Մարտիրոսի և մաւրն Գումայճի, և աշակերտին իւր, Թորոսի։ Եւ զիս զոսկաւղ և ծաղկաւղ սորա զՍարգիս անարժան սուտանուն քահանայ և զծնողսն իմ զգնացեալսն առ Քրիստոս, աղաչնաւք իմովք և, ամենայն զարմիւք, աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր, և որ զմեզ յիշէ և մեղաց թողութիւն խնդրէ նա Քրիստոս ասուսած զինք յիշէ, ամէն»։

Հիշված Սարգիսը՝ Սարգիս Պիծակն է, որը ծաղկել է ձեռագիրը 1337 թ. հետո։ Ձեռագիրն ունի կիսախորաններ, լուսանցազարդեր, ժապավենաձև գլխազարդեր և այլն։ Մանրանկարների ոճը հատուկ է Պիծակին։

22. № 9555

Աւետարան

Թերթեր՝ 246, մեծություն՝ 13,5×10 սմ, նյութ՝ մագաղաթ, կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ, գիր՝ բոլորգիր, ժամանակ՝ 1678 թ., գրիչ՝ Եփրեմ քահանա, տեղ՝ «ի յերկիրս Որոտնոյ, ի գեօղս Աղուերձ»։ 1678 թվականի գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել ստացող Զաքարիա եպիսկոպոսին, և «զմեծ վարդապետն զՅովհաննէս արքեպիսկոպոսն, հօրեղբայր սորին, որ բազում նեղութիւնս և ջանս կրեաց ի վերա սուրբ աթոռոյս, անպատմելի և անասելի չարչարանօք, բազում անգամ ի մահ մատնեցաւ ի ձեռն թշնամեաց իւրոց, այլ ասուսած փրկեաց ի մահուանէ և ի ձեռաց թշնամեացն։ Քանզի և էառ բազում գեղո-

[1] Ցարկթիվը կասկածելի է։ Ձեռագիրն ընդօրինակվել է «ի դառն և յանձուկ ժամանակս, որ Ըսքանդարն թագաւորեաց Թաւրիզոյ աշխարհիս» (275ա), ուստի 1421 թ. ոչ շուտ։

[2] Սույն ձեռագրի մեջ կային պատառիկներ՝ հայերեն ավետարանի մի կիսախորան և 3 վրացական մանրանկարներ (ավետարանիչներ)։ Վերջիններս այժմ կազմում են Մատենադարանի օտարալեզու ձեռագրաց հավաքածուի № 34 ձեռագիրը։

բէից մուլքս ի ձեռաց տաճկաց ի ձեռն հրովարտակ թագաւորացն և բրոնաւորացն, զոր բազում անգամ գնացեալ եղև ի դուռն շահին և յայտնեալ զիրս աղէտիցն սակս վանից մլքերոյն, զոր այլազգիքն բռնութեամբ առեալ էին ի տմարդի և արծաթասէր և յորովայնամոլ անմիաբան առաջնորդացն մերոց։ Եւ զսա սուրբ վարդապետս մեր, յօժանդակ գոլով իւրն զՀաքարիա վարդապետս, որ բազում ծախիւք և չարչարանօք և յաջողութեամբ ամենազօրին առտուծոյ կորզեալ խլեցին ի տաճկացն զմլքերն զամենայն, զոր գրեալ և եդեալ էին նախնիքն մեր ի մէջ կոնդակի, այսինքն ի գեւղն Տաթև և Աղանց, ի Շնհեր, ի Խոտ և Հալիձոր և այլ բազում տեղիս..» (7ա—7բ)։

Ձեռագիրն ունի խորաններ, կիսախորաններ, ավետարանիչների նկարներ, տերունական նկարներ, լուսանցազարդեր և այլն։

23. № 9556

Շարակնոց

Թերթեր՝ 384, մեծություն՝ 15×10,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ՌՃԺԶ (1667) գրիչներ՝ Ստեփաննոս գպիր և Կարապետ երեց (հայր և որդի)։ Ունի կիսախորաններ, լուսանցազարդեր. մարգկանց նկարները լուսանցքներում հետաքրքիր են տարազները ուսումնասիրելու տեսակետից։

24. № 9557

Աղօթագիրք

Թերթեր՝ 201, մեծություն՝ 9,5×7 սմ, նյութ՝ մագաղաթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ԺԶ դար։ Ունի մանրանկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր։

25. № 9558

Շարակնոց

Թերթեր՝ 334, մեծություն՝ 14,5×10 սմ, նյութ, մագաղաթ, գիր՝ բոլորգիր խազերով, կազմը՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ՉԼԵ՝ (1486)—94ա, նորոգվել է 1568 թ. Մարտիրոս Հիզանցու ձեռքով (նորոգման հիշատակարանը —334բ)։ Ձեռագիրն ունի լուսանցազարդեր, զարդագիր գլխատառեր և այլն։

26. № 9559

Բժշկարան (հայատառ թյուրքերեն)։

Էջեր՝ 518, մեծություն՝ 23,5×17 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տավարաթուղթ, ժամանակ՝ ԺԷ—ԺԸ դարեր,

27. № 9560

Ուրբաթագիրք

Էջեր՝ 47, մեծություն՝ 16×10,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, ժամանակ՝ ՌՃՀՂ (1727), տեղ՝ Կարս, գրիչ՝ Երեմիա քահանա։ Ձեռագիրը կազմած է տպագիր գրքի հետ։

28. № 9561

«Գիրք որ կոչի զգօն, արարեալ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին, ըստ խնդրոյ որդւոց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին՝ Արիստակիսի և Վրթանիսի»:

Էջեր՝ ա, բ +305, մեծություն՝ 20,5×15 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ կաշեպատ ատվարաթուղթ, ժամանակ՝ ԺԸ դար։

29. № 9562

«Երգք, յօրինեալք ի Սէյեադէ Շամախեցւոյ ի 1-էն օգոստոսի 1859 մինչ ց25 յունվարի 1860 ամի»:

Թերթեր՝ 143, մեծություն՝ 20×12,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ ատվարաթուղթ, 56ա թերթից գալիս է հաջորդ տետրակը, գրված 1861—62 թթ.։ Ձեռագիրն ունի գրաքննիչ Բերոյեվի կողմից արված բազմաթիվ գրաքննչական նշումներ և ջնջումներ։ Պատկանել է Հովհաննես Աբելյանին։

30. № 9563

Լուծմունք Նարեկի, Գէորգայ Սկևռացւոյ

Թերթեր՝ 380, մեծություն՝ 16,5×11,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ԺԷ դար, ծածկագիր հիշատակագրություններ՝ 139ա, 137ա։ Ձեռագրի լուսանցքներում տարբեր բույսերի գունավոր նկարներ, կատարված ամենայն ճշգրտությամբ։

31. № 9564

Գէորգ (Եգոր) Սարգսեան Խարազեանց Օձնեցու (ծածկանուն՝ Նժդեհ) բանաստեղծությունների ժողովածու

Էջեր՝ 1000, մեծություն՝ 36×22 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ ժամանակակից, նորակազմ։ Ինքնագիր է, ունի հեղինակի առաջաբանը, որից պարզվում է բանաստեղծությունների գրության տարեթվերը՝ 1882—1912 թթ.

32. № 9565

Ժողովածու տաղերի, ավետարանի հատվածների և այլն

Թերթեր՝ 41, մեծություն՝ 17,2×19,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ ատվարաթուղթ, ժամանակ՝ 1810 թ., գրիչ՝ Կարապետ, տեղ՝ «ի քաղաքն Հաշտարխան», հիշատակարան՝ 1810 թ.։

33. № 9566

Ժողովածու տաղերի և աղոթքների

Թերթեր՝ 87, մեծություն՝ 15×9,5 սմ, նյութ՝ թուղթ, գիր՝ նոտրգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ ատվարաթուղթ, ժամանակ՝ ԺԸ դար։

34. № 9567

Աղօթագիրք

Թերթեր 141, մեծություն՝ 7,5×5,5 սմ, նյութ՝ մագաղաթ, գիր՝ բոլորգիր, կազմ՝ կաշեպատ դրոշմազարդ տախտակ, ժամանակ՝ ԺԵ—ԺԶ դարեր։